

3901

2mј 6 p 6 G

2004



311-42

434

ՆԵՐՐՈՂԵԱՆ

ՅՕՐՀՆԵԱԼ ՅԻՇԱՏԱԳ

ԲԱՐԵՊԱՇՏԻՆ ԳԱԼՈՒՅԵԱՆ ՊԱՐՈՆ ՅԱՐՈՒ-
ԹԻՒՆԻՆ՝ ԵՐԵՄՆԵԻՇԻՆ ԳԱՄԵԱՅ ԱՐ-
ԴԻՆԱՇԱՏ ԱՄԹԱՊԵՏԻՆ:

Ի ՎԱՅԲԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՑ ԱՍՏՈՒԱԾԱՊԱՅԻ
ՅԱՇՈՒԿՈՒՄԱՅՆ ԱՐԵՆԱՅՆ ՎԱՅՈՑ՝ ՏԵԱՐՆ
ՅԵԱԹՆ ԵՓԵՍՈՍ ՏՐԱԿԱՐԵԼՈՅ ԵՒ ՏԵԱԹՆ
ՔԵԱԹՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՆՄԱ ՅԱՆՈՐԵԼՈՅ:

ԵՒ Ի ԴԻՏԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱԹՆ ՅՈՎՀԱՆ-
ՆՈՒ՝ ԱՍՏՈՒԱԾՇՆՏԻՐ ԲԱՐԵԿԱՐԳ Ա-
ՌԵՋՆԱՐԳԻԼ ՍՐԲՈՅ ԱՐԵՆԱՊՐԿՉԻ
ՎԱՆԱՅՆ ՆՈՐՈՅ ՋՈՒՂԱՅՈՒ:

Ի ԿԱԿԱԹՈՒ Ի 14 ՄԱՐՏԻ 1834:

ՏՊԱԳՐԵԱԼ Ի ՄԱՐԴԵԱՍԻՐԱԿԱՆ
ՃԵՄԱՐԱՆԻՆ:

891.99
Ն-61

3240

1907


RECEIVED

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY



88

CHICAGO, ILL.



54 01

38

891.99

N 2.7
3901-42

Գ-78

127

Ն Ե Ր Բ Ո Ղ Ե Ա Ն

(3)

Յ Օ Ր Հ Ն Ե Ա Լ, Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Բ Ա Ր Ե Պ Ա Շ Տ Ի Ն Գ Ա Լ Ո Ւ Ց Ե Ա Ն Պ Ա Ր Ո Ն Ծ Ա Ր ՈՒ-
Թ Ի Ի Ն Ի Ն՝ Ե Ր Ե Մ Ն Ե Ի Հ Ի Ն Գ Ա Մ Ե Ա Յ Ա Ր-
Գ Ի Ի Ն Ա Շ Ա Տ Վ Ա Ր Թ Ա Պ Ե Տ Ի Ն .

Ի Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ր Կ Ո Ւ Ց Ա Մ Տ Ո Ւ Ա Ծ Ա Պ Ա Յ Ի Ի
Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Մ Ա Յ Ն Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց՝ Տ Ե Ա Ռ Ն
Տ Ե Ա Ռ Ն Ե Կ Ր Ե Մ Ա Յ Հ Ր Ա Ժ Ա Ր Ե Լ Ո Ց Ե Ի Տ Ե Ա Ռ Ն
Տ Ե Ա Ռ Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ո Ւ Ն Մ Ա Յ Ա Լ Ո Ր Ի Ե Լ Ո Ց :

Ե Ի Դ Ի Տ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Տ Ե Ա Ռ Ն Յ Ո Վ Հ Ա Ն-
Ն Ո Ւ՝ Ա Մ Տ Ո Ւ Ա Ծ Ա Պ Ա Յ Ի Բ Ա Ր Ե Կ Ա Ր Գ Ա-
Ո Շ Ա Ն Ո Ր Դ Ի Ն Ս Ր Ի Յ Յ Ա Մ Ե Ն Ա Փ Ր Կ Չ Ի
Վ Ա Ն Ա Յ Ն Ն Ո Ր Ո Յ Մ Ա Ո Ւ Ղ Ա Յ Ո Ւ :

Ի Կ Ա Լ Կ Ա Թ Ա Ի 14 Մ Ա Ր Տ Ի 1834 .

Տ Պ Ա Գ Ր Ե Ա Լ Ի Մ Ա Ր Դ Ա Մ Ի Ր Ա Կ Ա Ն
Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի Ն .

Ա Ձ Դ

ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆ աստուածային հրաւիրեալ կոչեաց
 յաղպաւոր հովիտ աստի արտասուաց ՚ի կայանս անձե լանալի
 երանութեանց ՚ի խաղողաւետ խորանս վերինն Երուսաղե-
 մի զբարեյիշատակ զարդիւնաշատ զբազմերախտ Աարժա-
 ոյեան՝ զՊարոն ՅԱՐՈՒԹԻՒՆ ԳԱԼՈՒՑԵԱՆ Եւդո-
 կիային. որ յնթացս երեսնև հինգամեայ մեղուաջան ան-
 դուլ անձանձիր երկասիրութե՛ն՝ հերկագործեալ մշակեաց
 արգասաւոր պտղաբերութեամբ զբանեղէն անդս մնաց հա-
 բիւրոյ հարիւրոյ շայտեռ համբակաց ՚ի կայիւթա եղե-
 լոյ և ՚ի կողմանց կողմաց շնդկաց այսր իբրև ՚ի նոր Աթէնս
 դասադաս եկելոյ ժողովելոյ: Զառիջիկայս զայս դոզա-
 քեայ ներբողեան ասացեալ հեղինակին ՚ի բազմաժողով
 կայրդական հանդիսի երեքտասաներորդ տարեկան հար-
 ցաքնութեան աշակերտայն Մարգասիրական Ճեմարանին՝
 զարդիս ըստ մանաւոր խնդրոյ բազմաց ՚ի գրասէր համչի-
 բակաց տպագրութեամբ ընծայաբերէ վաղածանօթ բարե-
 կամաց այսր մեծարոյ երախտաւորին հասարակաց՝ կնդրկա-
 քոյր ազգօգուտ գործովք ՚ի մեջ շակազանց շնդկաց ծա-
 նուցելոյն և արդ բոլորապտուղ երանութեամբ ՚ի հանգու-
 ցիչ լանջս Քսի խաղողացելոյն. որոյ սխրալի քաջարութիք
 և անահաճոց առաքինութիւնք բոլորեալ կայեն ՚ի գլուխ
 նորա զհշտասաղարթ պսակ անէ՛րաւամ՝ յանանց արքայութե
 կցին ընդ այսմ ներբողենի և այլ երկու հակիրճ ոտանա-
 ւորք՝ զեղուածք երախտագէտ սրտի այլոյ ուրումն աշակեր-
 տիս Յուսալի և գրչին այսցիկ ներբողական բանից՝ բա՛
 և յոգունց ՚ի հանուրց սիրելցելոյն հրահանգելոյ փախա-
 գելի՝ այստհետև յաջողէլովն Ա. Դ ՚ի լոյս ընծայել զլիա-
 կատար ազդաշահ վարս թեթև աճեռն բարեշունջ երա-
 նաշնորհ Աարժապետիս ՚ի լրումն անմահ յիշատակի մեծա-
 մեծ երախտեաց նորա:

Դ Մարգասիրական Ճեմարան ԾՈՎԱՆՆԻՍ ԱՎԴԱԼԵԱՆՑ:
 ԿՅ, Դ 10 Մարտի 1834:

Ներբողեան յօրհնեալ յիշատակ արժանապատիւ արդիւնաշատ վարժապետին՝ Պրն Յարութիւնին Գալուցեան, յօրինեալ յաշակերտէն՝ զոր նայն սիրէր. և զորոյ անուն յօդէն սկզբնատառք այսր ներբողինի:

1

Իմ մահացու՝ գոլով բնութիւն՝ և տկար, յանմահէն՝ եղեալ կարգաւ՝ յայս աշխարհ. ուր վիշաք հոգւոյ՝ և ցաւք մարմնոյ՝ և աշխարհ հասեալ կարեօք՝ տանջեն զմարդ՝ չարաչար:

2

Յաջ կամ յահեակ՝ զաչս իմ՝ յուսով՝ դարձուցեալ՝ մասին բարեաց՝ երջանկութեան՝ կարօտեալ. այլ ինձ եղնակ՝ զի՛ ի յուսոյ՝ վրիպեալ՝ կեամ կեամ՝ յաւետ՝ յալիս ծովու՝ տառանեալ:

3

Ոմանց զարև՝ կիսոց զանձրև՝ ժառանգեալ՝ սոցա ուրախ՝ նոցա տրտում՝ կենցաղեալ. օակայն թախծանք՝ մշտախաւար՝ ինձ բաժինս՝ արբի արբի՝ մինչ ցմրուր՝ բաժակինս:

4

Վշտակցութեան՝ ձեր զիս գատեալ՝ արժանիս՝ ուլ մեծարոյ՝ իմ բարեկամք՝ վաղէմի. ունին դիւելով՝ ողբերգութեան՝ իմ ձայնի՝ տուք տուք զգիւր՝ աղէկիզեալ՝ իմ սքախի:

5

Հարան սաստիկ՝ ՚ի հոգի իմ՝ փուշք սգոյ,
աղբերբք սրտիս՝ ընանին իմ՝ լիճք լուսոյ,
երբ նկարեմ՝ աչաց իմոց յանդիման՝
զիմ վարժապետ՝ զՅարութիւն՝ Գալուցեան:

6

Ազատե՛րամ՝ դասք համբակաց՝ Հայկազեան՝
երախտագէտ՝ խմբեալ հոգւով՝ յայսմիկ տան,
յիշեն պատուով՝ զօրհաս նորին՝ Թախձական,
տօնեն տօնեն՝ զմանն նորա՝ պատուական:

7

Նա յարարչն՝ սատ ՚ի յայգոջ՝ Յարեթեան՝
ծառ անկեցաւ՝ ամենեցուն՝ պիտեան,
հարիւրաւոր՝ տոհմականօք՝ ամէ յամ՝
լնոյր ընոյր՝ զմանկտին՝ բարեզարմ:

8

Նորուն ճգամբք՝ դարոց ուսման՝ կառուցաւ,
ուր վարժեցան՝ մանկունք թուով՝ ո՛չ սակաւ,
մեզ գիտութեան՝ շաւիղ նովաւ՝ հորդեցաւ,
կրկին կրկին՝ դուռն իմաստից՝ մեզ բացաւ:

9

՚Ի հորովիլ՝ ամաց հնգից՝ երեսնից,
ո՛չ կասեցաւ՝ սա յագագաճ՝ իւր ջանից,
այլ պլախձան՝ իբրև մշակ՝ պտղորից՝
կնքեաց զիւր կեանս՝ կամօք Փրկչին՝ համայնից:

Մնա կանոն՝ ելև խրատ՝ խմաստնոյն
թէ՛ ՚ի ճգումն՝ պարտ է լինել՝ հաստատուն
քանզի վախճան՝ զյարգ շքոյ՝ տայ գործոյ
որպէս զտիւ՝ արգոյ գործէ՝ երեկոյ

Ե՛ր լիցի ինձ՝ յայլուստ վկայս՝ աստ կոչել
ձեզն կարեք՝ դուք զանճայն՝ վկայել
զի կեայ նա ձեօք՝ և դուք ՚ի նա՝ առաւել
ի ձեզ ՚ի ձեզ՝ զկեանս նորա՝ Տէր յաւել

Մնուլ էր սա՛ և անորդի՛ ըստ մարմնոյ՛
այլ բազմածին՝ և բազմորդի՛ ըստ հոգւոյ
և ո՛չ արդեօք՝ մեծ է հոգի՛ քան մարմինս
ըստ տէրունեան՝ հոգեխրատս՝ սուրբ բանինս

Վսեմ խորհուրդ՝ կայ ՚ի սորա՛ վիճակին
ընդ որ մարդկան՝ միօք հիացեալ՝ զմայլին
զի զտկար՝ մեղի բնութեան՝ զթեքին
եկից եկից՝ շնորհաճաւալ՝ սուրբ հօգինս

Դեմտրիոս՝ Փաղէրիոս՝ յեւլադա՛
հմուտ գրոյ՛ և գիտութեամբ՛ գերակայ
երեք հարիւր՝ վաթսուն և հինգ՝ արձանայ
արժանայալ՝ ձեռօք իւրոյ՛ համազգեաց

Այլ քան զնա՛ է երջանիկ՝ սա՛ իրաւս
 զի քան զնա՛ արդար վործովք՝ պատուեցաւ:
 զարձանս նորա՛ փշրեաց խուժան՝ անիրաւս
 այլ կենդանի՛ արձանք սորա՛ գոն անբաւ:

Լցեալ շնորհօք՝ աստուածատուր՝ հանձարոյ՛
 լյեր շնորհօք՝ զլիտս Հայկեան՝ մանկտոյ:
 շունչ քոյ օրհնեալ՝ իբրև զսիւզ՝ գարնայոյ՛
 զազգի ազգի՛ չքնող ծաղկունս՝ ամ ՚ի գոյ:

Եւ աջ քոյ իսկ՝ թեթև իբրև՝ զամպ անգայտ
 էր ՚ի սրահ՝ ճեմարանիս՝ լուսացայտ:
 նեցուկ եղեալ՝ անփորձ սահուն՝ թոյլ ոտից՝
 ածեր ածեր՝ զայնս ՚ի տաճար՝ Մուղայից:

Առաւելեալ՝ քաջարութեամբք՝ գեղազան՝
 ցուցեր յանձին՝ քում զպատկեր սիրական:
 որով եղեալ՝ յաչս Աստուծոյ՝ պատուական
 և առ մարդիկ՝ բնութեանակից՝ սիրական:

Նժդեհութեան՝ ասպնջական՝ բարեկամ՝
 զպանդխտեալս՝ առեալ ՚ի քոյո՛ օթեանս:
 օտարասէր՝ լեալ ըստ բանի՛ տերունեան՝
 օրինակեալ՝ ՚ի վարս քոյ՝ զԱբրահամ:

20

Յաւք և աղէտք՝ այս կենցաղոյ՝ քեզ Տասնն
այլ զՏոգի՝ քոյ ոչ շարժել կարային.
Իբրև զլէժ՝ անշարժ յալեաց՝ Տամբերեալ
Տոգուլ Յուլայ՝ Տամբերողի նմանեալ:

21

Ազնիւ ՚ի բարն՝ սղու ՚ի բանն՝ աղանի՝
անոյշ բնութեամբ՝ եղեալ Տանուրց՝ սիրելի.
և ողջախո՛՛ն ՚ի մէջ շարեաց՝ աշխարհի
նմանակից լեալ Յուլսեփու գեղեցկի:

22

Որամկին զքեզ՝ նոյնպէս ռամիկ՝ միշտ ցուցեալ,
և վե՛՛հագոյն՝ վե՛՛հից զքեզ՝ ոչ դատեալ.
Ընդ անբժից՝ սուրբ և ամբի՛՛ժ՝ երևեալ,
այլ ընդ թիւրոց՝ բնաւ երբէք՝ ոչ թիւրեալ:

23

Վերին բարեաց՝ ՚ի կեանս քո՝ փափագեալ,
ընթերցուածոց՝ սուրբ մատենից՝ պարագեալ.
որ լուսատու՝ Ճրագ ոտից՝ քոց եղեալ,
և զՏոգիդ՝ մանանայիւ՝ պարարեալ:

24

Ատուածային՝ պատուիրոնայ՝ անուայեալ.
բարեպաշտին՝ Էգեկիայ՝ նմանեալ.
Տիւանդութեամբ՝ զդէմս առ որմ՝ դարձուցեալ
և ախտի քոյ՝ ՚ի բարձրելոյն՝ քոյժ խնդրեալ:

Րենկանին՝ թերևս էր զախա՝ քոյ բուժեալ,
 և զամս քանի՝ ՚ի կեանս քոյ՝ յաւելեալ.
 այլ կամեցաւ՝ զքեզ յիւր տուն՝ ընդունել,
 և յազլլաւոր՝ կենաց աստի՝ ազատել:

Ետանգ ՚ի բնէ՝ անյիշատակ՝ քաղցր հողւոյ՝
 զոս թ ջնամոյ՝ համբոյր գրեւ՝ սիրեւոյ.
 յառնուլ ապտակ՝ ՚ի վերայ իւր՝ իսկ աջոյն՝
 դարձուցանէր՝ լռիկ զձախ՝ իւր իսկոյն:

Ահա՛ ասէր՝ Տէրն՝ ՚ի խաչին՝ բեւուեալ՝
 զթողութիւն՝ խաչահանուայ՝ իւր մաղթեալ.
 իսկ գեր Փրկչին՝ կարէ՛ գոլ ոք՝ հողածինս
 որ այժմ՝ ՚ի կառս՝ վաղիւ՝ ՚ի մէջ՝ դաբաղինս:

Պակչի սգով՝ այրիութիւն՝ տխրամած,
 իբրև անյոյս՝ անխօս անկեաց՝ արարած.
 զի շատ այրիք՝ ՚ի քոյ քաղցրիկ՝ հովանոյ՝
 պակասեցան՝ իբրև լապտերք՝ ՚ի ձիթոյ:

Եւ որբութիւն՝ ընդ օրհաս քոյ՝ սուգ առնու
 իբր՝ ՚ի հօրէ՛ զրկեալ մանուկ՝ անխզո.
 զի որբք բազում՝ ՚ի քոյ շնորհայ՝ զրկեցանս
 որպէս ծաղկունք՝ յանոյշ ցօղոյ՝ վաղորդեանս:

Տնանկութիւն՝ փղձկի փղձուկ՝ արտասուայ,
իբրև զերկիր՝ երաշտայեալ՝ յանձրեայ.
զի՛ն անանկս՝ աչ քոյ տեղայր՝ տեղ ոսկիս,
արգասաբեր՝ գեր քան զոսկին՝ Դիոսիս:

Ի հառաջանս՝ զառոյ հեծեն՝ աղգակամք՝
լեալ կարեկից՝ սգոյ նոցա՝ բարեկամք՝
որպէս բնակիչք՝ առանձնակեայ՝ քաղաքի,
ուր մերթ ծագէր՝ այլ ոչ ծագի՝ քաղցր արփի:

Ի իւծին և դէմք՝ աշակերտայ՝ քոյ զառովք՝
իբր ծիածան՝ գոնաթափ լեալ՝ ընդ ամպովք՝
և ի՛ն արդեօք՝ անթայ մնան՝ աչք զօրայ:
Երբ հող ծածկէ՝ զպետ իւրեանց՝ ողորմած:

Բոտեալ ՚ի մի՛ և ամպ վերին՝ գաւառայ,
հեղին սգով՝ զցօղս իւրեանց՝ արտասուայ,
ի վերայ քոյ՝ ոսկիապատ՝ դադալայ,
մինչ շիրիմ՝ քո՛ աստնջական՝ էր դեռ բայ:

Յորդին և յիս՝ շիթք արտասուայ՝ սասակագոյն,
յիս ՚ի նուստ՝ քոյ աշակերտ՝ ձեռնասուն,
ում խնամածու՝ եղև քոյ քաղցր՝ հայրութիւն,
ում յար զույգեր՝ սեր երախտեայ՝ սեր անհուն:

35

Անդ կարգայր՝ Յովնան վանն իւր՝ դդմեւոյն,
 զի զրկեցաւ ՚ի նորա քաղցր՝ հովանոյն.
 Իսկ ինձ ո՞րքան՝ աւարելի՛ մահ նորուն,
 որ էր յերկար՝ ինձ հովանի՛ գերագոյն:

36

Բակերտ էին՝ անօրէնութեան՝ Եղիայ՝
 էրբ վերացաւ՝ յերկինս ՚ի կառս՝ հրանիւթեայ.
 միայնացեալ՝ յոգնաթախիձ՝ Եղիսէ՛
 լայր լայր սգով՝ զիւր տէր բարձեալ՝ ՚ի Տեառնէ:

37

Ում միսիթար՝ եթող յայս կեանս՝ զիւր մաշկեակ,
 որ էր նման՝ յերկրէ յերկինս՝ վերելեակ.
 Իսկ ինձ տայի՞ր՝ իմ ուսուցչի՛ հեզ հոգին,
 ՚ի գիւրածել՝ զոտս իմ յանձուկ՝ նեղ ուղին:

38

Իհետեակ մատայ՝ ՚ի գլուխ քոյ՝ այժմ հիւսի,
 ընտրելագոյն՝ քան զազիւ թագս՝ արքայի.
 յոր յեռեալ կան՝ քաջարութիւնք՝ քոյ բարի,
 իբրև զակունս՝ Ահարովնեան՝ վակասի:

39

Թլիւի ամէ՛ զքոյ դիմօք՝ քաղցր Յիսուս,
 Ժպտեալ ՚ի քեզ՝ Ժպիտ սիրոյ՝ սրբալոյս.
 Եկ եկ՝ ասէ՛ եկ գու որհնես՛ ի հօր իմոյ՝
 մուտ մուտ վառ օք՝ յուրախութիւն՝ Տեառն քոյ:

40

Ի լուսեղէն՝ յեօթնաստեղեան՝ խորանի՝
խաղաղ՝ անդորր՝ հայ երանեալ՝ քոյի՝ հոգի.
ուր հրեշտակայ՝ և զուարթնոյ՝ պարբ կաղնին,
ուր թինդս առեալ՝ հոգիք սրբոյ՝ յար կայտուին:

41

Ի իւծիւ ապա՝ սգով յանշտիս՝ չէ՛ պստկամի,
զի զոր ողբամբ՝ հանգեալ յողբոյ՝ յաւիտեան.
որում վիշաբ՝ զաբ՝ լայք և չարիք չեն ժամանի,
զի կեայ կեայ նա՝ յերանաւէտ՝ հանգստեան:

42

Նա՛ աւանիկ՝ մաղթել նմա՝ է՛ արժանի
մշտասաղարթ՝ զթագ շնորհայ՝ անթառամ.
և զօրհնութիւն՝ հոգեւորոգ՝ յարութեան,
ոյր կարապետ՝ եղև մահն՝ փրկչական:

43

Գոհանալով՝ տայնոք զիստս՝ արարչին,
և ասասցոք՝ կամք քոյ օրհնեալ՝ եղիցին.
զի որ՛կ կարէ՝ հետազօտել՝ զկանս քոյ,
կամ նշմարել՝ զհետս նաու՝ ի ծովու:

44

Այլ այսմ՝ ընձիւ՝ արժան է մզ՝ փոյթ տանել,
զուսուցչին մեր՝ զանուշահոտ՝ սեր պատուել.
զանուն նորա՝ ի տառս ոսկի՝ դրոշմել.
և ի տախտակս՝ կրճոյ մերոյ՝ քանդակել:

Լճորդ մեծի՝ սիրոյ նորա՝ ճանաչիք,
 երբ կատարին պատում առ նա՝ ձեր պարտիք՝
 այլ այսմիկ քաջ՝ առ հաւատչեայ՝ մտաւոյիք,
 երբ ՚ի կշիւ՝ եկին նորուն՝ երախտիք:

Ողջունեալ ձեր՝ գլխասակ՝ իւր օրհնեալ՝
 փոյթ զժողով՝ համշիրակայ՝ գումարեալ՝
 ուր ձեռն ընդ ձեռն՝ անկողն՝ սիրով՝ ճեմին՝
 երախտիք հօր՝ պարտիք որդւոյ՝ կամովին:

Ի իթականա՝ հաճեալ ամէլ՝ ՚ի զնինն,
 զաննիւթ զսէր՝ երախտագէտ՝ ձեր սրտին,
 տայք նկարել՝ պատկեր նորա՝ լուսե բանդ,
 որ և նուէր՝ արժանապարտ նմա անդ:

Յորչափ կայցէ՝ այս ճեմարան՝ յիւր կային,
 կեցցէ կեցցէ՝ յիւր պատկերին՝ սերարփին,
 որ յաբ պատում զորմոց նորա՝ առ կախեալ՝
 խրախոյս լիցի՝ որոց նմա՝ յաջորդեալ:

Եւ երբ զմեզ՝ մահ ընդ հողով՝ ամփոփէ,
 նոր ամանակ՝ նոր ազգ ՚ի վեր՝ երանէ,
 յայժամ որդիք՝ մեր հայեցեալ՝ յայս նկար՝
 փոյթ յիշեցեն՝ զհարց խրեանց՝ բարեբար:

50
 Արդ ինչ չ'մնայ՝ զայլ ինչ յիմ' տալիս՝ յաւելլու
 այլ խոնջ թեոյ իմ՝ Մուղային՝ տալ զդուլ
 և աղերսել՝ զչինութիւն՝ այսմիկ տան
 ուր անդին՝ կեանք՝ մեր ուսուցչին՝ կըրեցան

51

Նա՛ռ ռնկնդ իրք՝ լուարնք դուք՝ զայս ինչ բան
 զոր յուշ առնեմ՝ խմարհոթեանք՝ ի վախճան
 աւելիք սորա՛ քաջարութեանց՝ զհամոզէս
 օ՛ն դնայէք՝ և արարէք՝ դուք նոյնպէս

Ի Կալիֆօրնի Մարդասիրական Ճեմարանի Ի 10
 Յունւարի 1834:

ՅԻՇԱՏԱԿ ԱՐԿԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՏԻ
 ԱՌԱԿ Զ. 7.

Համառօտ ներբարեւան յօրհնեալ յիշատակ արժանապատիւ
Պրն Գործաթիւնին Գալուցիանի նախագահ Աշքիւ սպեւակն
Մարդասիրական Հիմարանին:

Գործնեալ 'ի Գրիգորէ Մարգարէան Մանուկեանց:

1

Ո՛վ խաւարանն՝ խորին արանութեան՝
որ պատի զձեզ՝ երեսօք համնս:
ն՛վ անասնէ լի՝ մեծի կայստեան՝
զոր սգով կրէ՝ այս մեր ճեմարան:

2

Ձի եմառ 'ի նա մահ՝ անագորոշն:
ե զուսուցիչ մեր՝ խելաց բարեմնն:
արդ դասարկութիւն՝ տիրէ անտոշն:
աւր բազմեր յաւաջ՝ հոգի գերագոշն:

3

Բարձառ 'ի միջոյ՝ հայր հասարակաց,
որ սայր մեզ խրատ՝ լինել բարեկեաց:
բաճանան կարեօք՝ զաւր սաստիկ վշտաց:
'ի վերայ դասուց՝ մեր աշակերտաց:

4

Ո՛վ գայլ բանասարճ մահ՝ յանկարծահաս,
դե՛տրդ երբե գող՝ դաւանան սողաս:
նչ խնայցիցի՝ 'ի սորբիկ մեր դաս:
ե զի գաթ չունիս՝ նչ աւմեր գթաս:

5

Ո՛չ 'ի ձիւնախոյլ՝ ալիս ձերտնադն:
որ մեր գորատան՝ էր հոյակայ սին:
նչ ե 'ի կաճառս՝ մնատալ մանկաւոշն:
զի խաւ ձեացար՝ առ նայս միջին:

6

Ո՛ր Տիգրայեցի՝ վիճակի մարդկան
որ ընկճեալ նեղի՝ բաժնաժեւանի մահաւանս
ո՛ր տայր ինձ աղբու՝ ձայն ողբերգութեան
երգել աղբաբլ՝ զայլեւս մեր բնութեանս

7

Մից ան մահացու՝ և թեր խոհական
ձայնէ յականջս իմ՝ սուրբ աւետարանս
եթէ ոչ յերկրի՝ մեռանի ցոյցեան
նչ կարէ բերել՝ զաւանտ սոհմանան

8

Այսպէս առաջնորդ՝ ձերոյ գպրութեան
որում ճոյ հողոյ՝ եղև օթեանս
գրեցցի կրկին՝ զլոյս յարութեան
և անմահացի՝ շորհօք փրկութեան

9

Գաւեցիք ուշով՝ զաչս ձեր մտայ
ի սպիտակաբաւ՝ զգեաւ հարսանեաց
զոր յարբայութեան՝ նմա պատարասեաց
հայրն Երսուսի՝ հայր առաքիճեաց

10

Լերնք հեռեաց՝ մանկանք շորհածին
առաքիճութեանց՝ ձեր քաջ ուսուցչին
զի և ՚ի գրախա ձեր բողբոկային
անթաւամ պսակք՝ ՚ի յախաննին

Ի Մարտիտիանոս Զեմարանի, 'ե 10 Յունիւրի, 1834.

Դարձեալ ՚ի յիշատակ արժանապատիւ վարժապետին՝ Գրիգոր
Յարութիւնին Գալուպեան՝ երկասիրութի Գրեգորի Սարգսեան
Մանուկեանց:


ՈՒՐ ԵՆԱՆ

Եւ ո՛ր է նա՛ որ միշտ էր մեզ՝ մերձակայ,
ոչ առ կողմամբ՝ իւր սիրայնոյ՛ նա արդ կայ՝
ոչ ՚ի հովիտս՝ զուարթերես՝ արդ շրջի,
ուր ճեմ առեալ բերկրէր ընդ զարդս՝ աշխարհի:
Իւր նազելոյ՛ ՚ի դէմս այլ ոչ՝ նա հայի,
այլ ոչ նմա՛ են զարդք երկրի՝ բերկրալի:
որք քաղցր են յոյժ՝ որպէս յառաջ՝ և ՚ի շահ,
և գեղազան՝ իւր սէրարիին՝ այլ ո՛ր է նա:

Ո՛չ ոչ աղօտ՝ արդ երեւի՛ շող արմուղն,
որ սոկերանք՝ գործէր զծառս՝ իւր այգւոյն,
այն հէշտութիւնք՝ որք մերթ նմա՛ քայլք էին,
քայլք են կենաց՝ և բընութեան՝ աակաւին:
Բայց ո՛հ իւր տուն՝ ոչ նոյնգունակ՝ վայելուչ
պարտեզդ՝ արծուք՝ ծառք՝ բոյսք նորա՛ անտերունչ:
վարդք՝ մանիշակք՝ արդ հիւթազուրկ՝ կիսամահ՝
շարժեալ ՚ի սիւզ՝ մեղմ շնջեն՝ ո՛ր է նա:

Յեկեղեցւոյ՛ շիրիմս վէմ մի՛ յաւելաւ,
բազմեալն յաթող՝ յիւր յաթողոյ՛ մեկնեցաւ:
աստ թախճութիւն՝ նստի լռիկ՝ միայնակ,
անդ մահ սիրուէ՛ զիւր արջնաթոյր՝ դրբօշակ:
Կեանք չքայաւ՝ շունչ պարզեցաւ՝ ել ճախրեաց,
անպեալն էանց՝ այլ ոչ դարձիցի՛ ՚ի բարձանց,
գնացք սիրուն՝ դըրահ նորա՛ գերակայ՝
սթափ շարժուն՝ ո՛հ, ո՛ր է նա՛ այժմ՝ ո՛ր է նա:

Ի Մարտտետրուան Գրքանակին Ի 10 Յոսնվարի 1834:






Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

h.



Մահացուք՝ մահանան՝ միմեզաՄ :
 զի նոցա՝ մահ նիւթեայ՝ հին Ադամ :
 մահ՝ վճիռ՝ անխուստի՝ աստուածեան :
 որում են՝ ստորանկ՝ ազգ մարդկան :
 Այլ զմահ՝ մահացոյց՝ նորն Ադամ :
 մահու չափ՝ մահացեալ՝ ինքնակամ :
 մահակիր՝ նեոք մահու՝ փշրեցան :
 յաւիտեան՝ յաւիտեան՝ յաւիտեան :

Ապաւեն՝ փրկութեան՝ քեզ արձ :
 զխաչեալն՝ ի լերին՝ Գողգոթայ :
 որ զպարտս՝ վճարեայ՝ Ադամայ :
 և որդոց՝ նորա ետ՝ կեանս անմահ :
 Աւստիկ՝ Ղազարոս՝ չորսօրեայ :
 և որդին՝ հեզ այրոյն՝ Նայինայ :
 յարութեամբ՝ լոյս կենայ՝ զգեցան :
 յաւիտեան՝ յաւիտեան՝ յաւիտեան :

Համայնից՝ մի մեւտ է՝ յոյս աշխարհ :
 և մի ելք՝ բոլորից՝ հաւատար :
 մերկ ծնաք՝ և մեռցուք՝ մերկամոգամ :
 այլ լիցուք՝ սուրբ գործովք՝ մեք փարթամք :
 Յաչս տեառն՝ մահ սրբոյ՝ պատուական :
 լատ Գութայ՝ քնարին՝ տաննաղեան :
 սուրբ վարովք՝ լիցուք տեառն՝ սիրական :
 յաւիտեան՝ յաւիտեան՝ յաւիտեան :



